ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 70

ք. Երևան 31 հունվարի 2013 թ.

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս աշխատակազմի ղեկավար Վահե Էլոյանի, որը գործում է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Գյումրու աթլետիկայի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Յա. Եղիազարյանի, որը գործում է «Գյումրու աթլետիկայի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, միասին անվանվելով նաև Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն պայմանագրով Պատվիրատուն, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հավելված № 1-ի № 1 աղյուսակի 09 բաժնի 05 խմբի 01 դասի «02. Արտադպրոցական դաստիարակություն» ծրագիրը, Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 20-ի № 1616-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը, իր կանոնադրությունը (այսուհետ՝ Կանոնադրություն), պատվիրում է, իսկ Կատարողը պարտավորվում է իրականացնել արտադպրոցական դաստիարակության (ուսուցման) հետ կապված մարզադպրոցներում իրականացվող ուսումնամարզական գործընթացի կազմակերպումը (այսուհետ՝ Ծառայություն)՝ սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելվածին՝ «Վճարման ժամանակացույցին», ինչպես նաև մանկապատանեկան մարզադպրոցների մարզական խմբերում երեխաների ընդգրկման և ուսումնամարզական գործընթացի կազմակերպման մեթոդական երաշխավորությունների չափորոշիչներին համապատասխան:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Կատարողը պարտավոր է՝

2.1.1 Պատվիրատուի հատկացրած միջոցներով ապահովել սույն պայմանագրի 1.1 կետով նախատեսված գործընթացի կազմակերպումը,

2.1.2 հատկացված միջոցներն օգտագործել սույն պայմանագրի 2.1.1 ենթակետով նախատեսված գործընթացի կազմակերպման համար,

2.1.3 ապահովել իրականացվող աշխատանքների հաշվառումը և հաշվապահական հաշվառման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վարումը,

2.1.4 սույն պայմանագրի 3.2.7 կետով նախատեսված դեպքում Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում անհատույց ապահովել թերությունների վերացումը և Պատվիրատուին վճարել սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը,

2.1.5 սույն պայմանագրի 3.2.6 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները,

2.1.6 սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը,

2.1.7 մինչև 2013 թվականի նոյեմբեր ամիսը ներառյալ Ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունը Պատվիրատուին ներկայացնել մինչև 2013 թվականի դեկտեմբերի 5-ը, երկու օրինակից, իսկ դեկտեմբեր ամսվա համար՝ մինչև 2013 թվականի դեկտեմբերի 25-ը,

2.1.8 ապահովել սույն պայմանագրի 1.1 կետով նախատեսված գործընթացի կատարումը՝ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Կատարողին ցուցաբերել անհրաժեշտ գործնական և մեթոդական օժանդակություն,

2.2.2 պարբերաբար վերլուծել Կատարողի կողմից իրականացվող աշխատանքները, մշակել առաջարկություններ գործունեության հետագա ծրագրերի բարելավման վերաբերյալ, տալ ցուցումներ բացահայտված թերությունների վերացման ուղղությամբ,

2.2.3 զննել և ընդունել սույն պայմանագրի 1.1 կետին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին,

2.2.4 Ծառայությունների արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.2.5 հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից եռօրյա ժամկետում Կատարողին ներկայացնել իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունները չընդունելու պատճառաբանված մերժումը:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

3.1 Կատարողն իրավունք ունի՝

3.1.1 Պատվիրատուից պահանջելու վերացնել բոլոր այն թերություններն ու բացթողումները, որոնք խոչընդոտում են Կատարողին լիարժեք իրականացնելու իր գործունեությունը սույն պայմանագրի շրջանակներում,

3.1.2 իրականացնելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ իրավունքներ,

3.1.3 մինչև Ծառայությունների արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվելու սույն պայմանագրի կատարումից՝ լրիվ հատուցելով դրա արդյունքում պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 30 օր առաջ տեղեկացնելով Պատվիրատուին,

2.3.2 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.3 կետում նշված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուից պահանջելու վճարել իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

3.2 Պատվիրատուն իրավունք ունի՝

3.2.1 հետևելու մարզական միջոցառումների կազմակերպման գործընթացին և պատշաճ անցկացմանը,

3.2.2 պահանջելու Կատարողից վերադարձնել չծախսված գումարի վերջնական (տարեվերջյան) ազատ մնացորդը,

3.2.4 պարբերաբար ուսումնասիրելու հատկացված դրամական միջոցների նպատակային և արդյունավետ օգտագործումը և ներկայացվող հաշվետվությունների հավաստիությունն ու ճշտությունը,

3.2.5 ցանկացած ժամանակ ստուգելու Կատարողի կողմից կատարված Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

3.2.6 առանց Ծառայության արդյունքի դիմաց վարձատրելու, միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները, եթե Կատարողի կողմից մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի 1.1 կետով սահմանված պահանջներին,

3.2.7 չընդունելու Ծառայության արդյունքը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրի 1.1 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջելու Կատարողից վճարել սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը,

3.2.8 մինչև Ծառայության արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվելու սույն պայմանագրի կատարումից՝ այդ մասին առնվազն 30 օր առաջ տեղեկացնելով Կատարողին և հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները,

3.2.9 իրականացնելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայությունների գինը կազմում է 25755.2 /քսանհինգ միլիոն յոթ հարյուր հիսունհինգ հազար երկու հարյուր/ Հայաստանի Հանրապետության դրամ՝ ներառյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված բոլոր հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները, կանխավճարը կազմում է 23351.3 /քսաներեք միլիոն երեք հարյուր հիսունմեկ հազար երեք հարյուր/ ՀՀ դրամ:

4.2 Սույն պայմանագրի գինը կարող է փոփոխվել մարզադպրոցի մարզական խմբերում ընդգրկվող երեխաների ուսումնամարզական գործընթացի կազմակերպման մեթոդական երաշխավորությունների չափորոշիչների պահպանման անհրաժեշտությամբ:

4.3 Պատվիրատուն սույն պայմանագրի 4.1 կետում նշված գումարը Կատարողին վճարում է հետևյալ կարգով՝

4.3.1 մինչև 2013 թվականի նոյեմբեր ամիսը ներառյալ մատուցված Ծառայությունների դիմաց վճարումները կատարվում են միանվագ կարգով, ամսական կտրվածքով՝ որպես կանխավճար մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 5-րդ աշխատանքային օրը, որը մարվում է մինչև 2013 թվականի դեկտեմբերի 16-ը:

Ընդ որում՝ յուրաքանչյուր ամիս վճարվող գումարի չափը ներկայացված է սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելվածում,

4.3.2 2013 թվականի դեկտեմբեր ամսին մատուցված ծառայությունների դիմաց գումարները վճարվում են երկկողմ հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա, մինչև 2013 թվականի դեկտեմբերի 25-ը:

4.4 Մինչև 2013 թվականի նոյեմբեր ամիսը ներառյալ մատուցվելիք Ծառայությունների դիմաց կանխավճարի ձևով կատարված վճարումների և փաստացի մատուցված՝ հանձնման-ընդունման արձանագրությամբ սահմանված, Ծառայությունների մատուցման արդյունքների միջև դրական տարբերության դեպքում Պատվիրատուն գումարները հաշվանցում է 2013 թվականի դեկտեմբերին մատուցվելիք Ծառայությունների դիմաց վճարվող գումարներից: Եթե հաշվանցվելիք գումարի չափը գերազանցում է 2013 թվականի դեկտեմբերի վճարվելիք գումարը, ապա Կատարողը պարտավորվում է հանձնման-ընդունման արձանագրությունը երկկողմ հաստատվելու օրվանից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում գումարները հետ փոխանցել Պատվիրատուին:

4.5 Պատվիրատուն գումարները վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով՝ սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելվածին՝ «Վճարման ժամանակացույցին» համապատասխան՝ հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա:

4.6 Եթե պայմանագրի գնի հիմնավորվածության և արժանահավատության փորձաքննության արդյունքում պայմանագրի գինը որակվում է շուկայական գնից 10 (տասը) տոկոս բարձր, և պայմանագրի կողմը չի համաձայնվում այդ չափով գնի նվազեցմանը, ապա Պատվիրատուն պայմանագիրը միակողմանիորեն լուծում է և չի կրում պայմանագրի լուծման հետևանքով առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայությունների որակի և սույն պայմանագրի 1.1 կետով նախատեսված պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի 3.2.6 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման և 3.2.7 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Ծառայությունները չընդունվելու, ինչպես նաև սույն պայմանագրի 2.1.4 կետով նախատեսված ժամկետը խախտելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,05%-ի (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայությունների մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր կետանցի համար գանձվում է տույժ՝ պայմանագրի գնի 0,05%-ի (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություններ մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարներից, կամ հանձվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.3 և 4.4 կետերով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր կետանցի համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 %-ի (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տուգանքի և տույժի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ՝ ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ

6.1 Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների ծառայության դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1 Այն դեպքում, երբ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև սույն պայմանագրի կնքումը Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերը ի հայտ գալուց հետո, Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու սույն գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև սույն պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային սույն պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասները այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը սույն պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.2 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև պարտավորությունների լրիվ կատարումը:

7.3 Սույն պայմանագրի պայմանները տարածվում են կողմերի միջև 2013 թվականի հունվարի 8-ից ծագած հարաբերությունների վրա և գործում են մինչև 2013 թվականի դեկտեմբերի 25-ը: Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի՝ առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհամարվի սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.6 Կատարողի մատուցած Ծառայությունների արդյունքը Պատվիրատուի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

7.7 Սույն պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է հայերեն, կնքվում է 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի «Վճարման ժամանակացույց» հավելվածը համարվում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
ք. Երևան, Արովյան 9
Հ/Հ՝ 900011059202
ՀՎՀՀ՝ 02586282
Աշխատակազմի ղեկավար՝ ---------------- Վ. Էլոյան
Կ. Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Գյումրու աթլետիկայի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ
Շիրակի մարզ, ք. Գյումրի, Օգանյան 5
«Արդշինինվեստբանկ»
հ/հ՝ 247260053621
ՀՎՀՀ՝ 05513404
տնօրեն՝ ---------------- Յա. Եղիազարյան
Կ.Տ.

Հավելված
« 31 » հունվարի 2013թ. կնքված N 70 պայմանագրի

Վճարման ժամանակացույց

«Գյումրու աթլետիկայի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ-ին 2013 թվականին ըստ ամիսների հատկացվող գումարներ

N	Ամիսը	Գումարը (հազար դրամ)
1	Հունվար	-
2	Փետրվար	2575.5
3	Մարտ	2575.5
4	Ապրիլ	2318.0
5	Մայիս	2318.0
6	Հունիս	2317.9
7	Հուլիս	2146.3
8	Օգոստոս	2146.3
9	Սեպտեմբեր	2146.2
10	Հոկտեմբեր	2403.8
11	Նոյեմբեր	2403.8
12	Դեկտեմբեր	2403.9

Պ ա տ վ ի ր ա տ ու
ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
ք. Երևան, Աբովյան 9
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
հ/հ 900011059202
ՀՎՀՀ-02586282
Աշխատակազմի ղեկավար՝

---------- Վ. Էլոյան

Կ.Տ.

Կ ա տ ա ր ո ղ
«Գյումրու աթլետիկայի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ
Շիրակի մարզ, ք. Գյումրի, Օզանյան 5
«ԱրդշինինվեստԲանկ»
հ/հ՝ 247260053621
ՀՎՀՀ՝ 05513404
տնօրեն՝

---------- Յու. Եղիազարյան

Կ.Տ.